ԵԼ ՌԵԳԻՍՏԱՆ ՅԵՎ Գ. ՖՐԻԴ

891.71
Ռ-26

# ՀԵՐՈՍ ՔԱՂԱՔԸ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ
1929

891.71
Ռ-26
կր.
Լասյ 33820

ԵԼ ՌԵԳԻՍՏԱՆ ՅԵՎ Գ. ՖՐԻԴ

# ՀԵՐՈՍ ՔԱՂԱՔԸ

ԹԱՐԳՄ. ԳՐԱԲԻՈՍ

Ղարաքիլիսա
1929

24 JUL 2013

73233

Эль Регистан и Г. Фрид

# ГЕРОЙ ГОРОД

перевод с русск.

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԿՈՄՈՒՆԱԼ
ԲԱԺՆԻ ՏՊԱՐԱՆ

ԳՐԱՌԵՏՊԼԱՐ № 150

ՊԱՏՎԵՐ № 547 ՏԻՐԱԺ 5000

25 NOV 2010

## I. ՅԵՐԵՔ ԿԱԽԱՂԱՆ

Կալա-ի-Խումը հնդաշեն բերդը մի ժամանակ Բուխարայի էմիրի մայրաքաղաքն էր։

Կալա-ի-Խումը շրջանի դարպասների բանալին էր, ռազմավարական մի հարմար կետ, ծաղկած պարտեզների մի յերկիր, վորտեղով, ըստ ավանդության, անցել էր Մեծն Ալեքսանդր Մակեդոնացին։ Կալա-ի Խումըն առաջին գյուղն էր բասմաչների բանդաների ճանապարհին։

Կալա-ի-Խումըը պատրաստ չեր դիմավորելու Ֆուզայլիի բանդիտներին։ Խորհուրդների մեծ յերկրի փոքրիկ գյուղաքաղաքը զբաղված էր խաղաղ շինարարությամբ։ Բնակչությունն իր ամբողջ ուշադրությունը նվիրել էր փոքրիկ հողամասերի ցանքերին, վոր նա նվաճել էր լերկ ապառաժներից։

Յեվ յերբ Ֆուզայլիի բանդան հարայհրոցով ու կրակոցներով ցրվեց պարտեզ—գյուղաքաղաքի նեղ փողոցներում, շատերը դեռ չգիտեյին, վոր արդեն հասել է խա-

ղաղ, հանգիստ օրերի վերջը, վոր կարող պատահել վաղն այլևս հնարավոր չլինի դաշտ դուրս գալ աշխատանքի։

Յերեկոյան դեմ ամեն ինչ պարզ եր արդեն։

Յերեկը փողոցով յեկվոր բասմաչները քարշ եյին տալիս յերկու սպանված միլիցիոների դիակները։ Այնուհետև ճանապարհին պարգևատրելով հարվածներով ու աքացիներով՝ քարշ տվեցին խորհրդի Նախագահին։ Նրան կողպեքի տակ փակեցին բանտում։

* * *

Յերեկոյան Ֆուզայլի Մաքսումը մերձավոր ոգնականների հետ միասին խորհրդի յեր նստել մեջիտում։

Ալլահի տան հին կամարների տակ, այն պատերի մեջ, վորտեղ շարունակ հնչել են միայն ստահոդ խոսքեր, մի քանի ժամ տեղի ուներ բանդիտների այն փոքրիկ շտաբի նիստը, վոր յեկել եր կատարելու անգլիական շտաբի հանձնարարությունը։

Ո՞ւմ քունը կտաներ այդ անմոռաց գիշերը։ Ո՞վ կարող եր գիտենալ, թե ինչ ե պատրաստվում նրա համար վաղը։

Իսկ լուսաբացին ծալկած գյուղաքաղաքի շրջակա ղշլաղներում (գյուղերում)



տարածվեց առաջին կանացի յերկայնաձիգ հեծեծանքը.—

Վայ—դո՜...

Զինված ձիավորների խմբերը ներխուժելով բնակարանները և խուզարկելով տները, քշում հավաքում եյին գյուղացիներին։



Մաքսում Ֆուզայլին առաջուց սուրհանդակներ եր ուղարկել...

Մաքսում Ֆուզայլին առաջուց սուրհանդակներ եր ուղարկել, վորոնք պետք ե հաղորդեյին, թե՝ «Հանուն վողորմած աստծո նա յեկել ե փրկելու հավատը պիղծ անհավատների ձեռքից, վորոնք ժխտել են մոլլաներին, վոտնատակ են տալիս հին օրենքները, թույլատրում են, վոր կանայք իրենց դեմքերը բացեն օտար

տղամարդկանց առաջ, և աղջիկները սովորեն դպրոցում տղաների հետ միասին»։

Դաշտերից կտրված մարդիկ, զինված իգիթների մտրակների տակ, վոչխարների հոտի պես, մի տեղ հավաքված ձնից մաքրում եյին Գիշում լեռնանցքը, վորն ընկած եր բասմաչների ճանապարհին։

Մաքսում Ֆուզայլին զոտեպնդված անգլիական փամփուշտներով լի փամփշտակալներով, ձի հեծած գնում եր իր ջոկատի առջևից։ Նրան հետևում եյին փախստական 8 մոլլա, նրա զինակիցներն ու խորհրդատուները։

* * *

Բանդան ներխուժեց Թափի-Դորա գյուղը։

Թափի-Դորայում իգիթները ջարդեցին Ուզբեկտորգի խանութի դռների փականները և հրապարակում հավաքված գյուղացիների ձեռքն եյին բռնի կերպով խցկում խանութից թալանած կտորեղենի թոփերը։

Նա, ով հրաժարվում եր ընդունել այդ նվերը, տեղնուտեղը մի այլ նվեր եր ստանում, այն ե՝ հարվածներ հրացանի խզակոթով ու մտրակներով։

Ֆուզայլին վողորմած եր և առատաձեռն։ Նրա առատաձեռնությունից ու նրա վողորմածությունից բնակչությունը լեռ-



ներն եր փախչում, թողնելով տուն ու տեղ, զավակներին, դաշտերն ու ունեցվածքը։

Հենց այդտեղ բանդիտների առաջնորդը մի ճառ ասաց ժողովրդին, նորին բանդիտական պայծառափայլության նոր հպատակներին։

«Հանուն ամենավողորմած և գթառատ աստծո, մարգարեյի և աստծո ոգնությամբ, մենք յեկել ենք ազատելու ձեզ անհավատներից ու պիղծերից։

Խորհուրդների իշխանություն չկա այլևս, նա տապալված ե։ Չկա Կարմիր բանակ։ Շուտով, այսոր կամ վաղը, դուք կտեսնեք յերկնքում մեր բարեկամների— անգլիացիների պողպատե դռռացող «թռչուններին», վորոնք փոքր ինչ ուշացան Քաբուլում, պայծառափայլ եմիրի,—Հաբիբուլլահ խանի պալատում»։

Ֆուզայլին ավարտեց իր ճառը մեռելային լռության մեջ։ Նա մի տասնյակ ձիավոր թողեց իր նվաճած անպաշտպան գյուղում և ձին ուղղեց դեպի հառաջ, դեպի Կալա-ի-Խայտ։

Ֆուզայլին նստած եր մեջիտի գավթում, յերբ նրա մոտ բերին այդ յերեք կանանց, վորոնց հրամայված եր գտնել և անմիջապես բերել մեջիտը՝ Ֆուզայլի ու նրա խորհրդատու մոլլաների վոտների տակ։

Կեղծավոր ձայնով, վաղորոք զգալով պատժի բովանդակությունը, անգլիական վարձկանը մեղմությամբ հարց ու փորձ էր անում կանանց, թե ինչու էին նրանք բացել իրենց յերեսը։

Յերեք կանայք, աչքերը խոնարհած, պատասխանում էին, վոր նրանք կամեցել են լույս ու գիտություն ստանալ, և վոր ուզեցել են ոգնել իրենց ընտանիքներին, ամուսիններին ու զավակներին։

— Նրանց փեշերը մեխել մզկիթի շեմքին,—հրամայեց Ֆուզայլին։

Ջոկատը, կատակելով շարժվում էր Կալա-ի-Խայտով, անցնելով շուկայի հրապարակով։

Հրապարակի վրա յերկար տարիներից հետո, Բուխարայի էմիրի հեռանալուց հետո, առաջին անգամ յերևացել էր յերեք կախաղան։



Յերկար տարիներից հետո առաջին անգամ յերևացին 3 կախաղան

Յերեք կախաղանի վրա ճոճվում էր կանացի յերեք դիակ։—Վողջույն «կուլտուրական» Լոնդոնին ու նրա փառահեղ ներկայացուցիչ բանդիտ Ֆուզայլիին։

## 2. ԱՅՍՊԵՍ ԵՅԻՆ ՄԵՌՆՈՒՄ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Այդ օրերը տոն էին մզկիթի համար։ Ազան տվողի ձայնը, վորը հավատացյալներին աղոթքի յեր կանչում, հնչում էր հաղթական շեշտերով։

Այդ ձայնն արձագանգ էր գտնում լեռներում ու ձորերում և ցնծալի յերաժշտությամբ հնչում մոլլաների, կալվածատերերի և նախկին էմիրական աստիճանավորների ականջներում։

Ջրերով, լեռների կածաններով, ձյունածածկ լեռնանցքներով թռչում էր լուրը։

— «Ավղանստանից յեկել է Մաքսում Ֆուզայլին իր իգիթներով, զինված անգլիական լավագույն զենքով։

Նրա յետևից գալիս է Բուխարայի էմիրն անգլիական զորքերով, գնդացրերով, թնդանոթներով ու սավառնակներով։

Հասել է չքավորների և անտուն ու անտեր գյուղացիների իշխանության վերջը։

Նրկին կլինի ստտծո իշխանությունը —կալվածատերերի իշխանությունը»:
Մաքսումի ջոկատն էյին շտապում կալվածատերերը, ազնվականները, պաշտոնաթող ատտիճանավորները:

* * *

Ֆուզայլին հպարտ-հպարտ մտնում էր իր հայրենի Կալա-ի-Լյաբիոբ գյուղը: Նրա յետևից շարժվում էյին նրա իգիթներն ու զոռով հավաքված խաղաղ գյուղացիները:
Լյաբիոբում ազգականների և աղսաղկալների շրջանում նա պատմում էր, թե



Պատմում էր Ֆուզայլին իր ազգականներին, աղսաղկալների շրջանում...

ինչպես Բաբուլում դեղին փայլուն սրնքակալներ ու պրոբկայի կորդակ հագած մի խորհրդավոր մարդու հրամանով նրան զենք են տվել, ավղանական ռազմական պահեստից:



Մաքսում Ֆուզայլին անկեղծորեն խոստովանում էր, վոր փող շատ ունի, իսկ յեթե պետք լինի, ելի կտան:
Յեվ այն ժամանակ, յերբ Ֆուզայլին պարծենում էր հայրենակիցների առաջ մեծ հաջողությունների ու մեծ մարտերի մասին, մի ինչ-վոր դշլաղում մեկի հայտնած մի միտք գյուղացիների մեջ բերնե-բերան անցնում էր քչփչոցով.
— Ավելի շուտ ճանճը կսպանի ուղտին, քան թե Մաքսում Ֆուզայլին կհաղթի Խորհրդային իշխանությանը:
Այսպես էյին խոսում բանդաների ճամբին ընկած գյուղերում:
Ֆուզայլի շարժման լուրը մեծ անհանգըստություն առաջացրեց Գարմ քաղաքում:

* * *

Քաղաքում, վորտեղ ընդամենը մի յերեք տասնյակ աշխատողներ կային, հաշված Գործկոմի կին-ցրիչին, Ուզբեկառի գործակատարին ու Լուսբաժնի վարիչին և բժշկուհուն,—չկար վոչ գնդացիր, վոչ զենքի պահեստ:
Մի քանի հատ հրացան... և մի բուռ խաղաղ խորհրդային աշխատողներ, ընդդեմ հարյուրավոր փորձված բանդիտների, վորոնք զինված են անգլիական հրաշալի

զենքով և ունեն փամփուշտների մեծ պաշար։

Վո՜րպիսի անհավասար ուժեր... Տագնապխառաջին իսկ ազդանշանով խորհրդային Գա՛րմը հավաքվեց ինքնապաշտպանության շտաբը, Գործկոմը, ալ դրոշի տակ, ժպտացող Իլյիչի նկարի տակ։

Այդ օրերին Գարմը հյուր էին յեկել 12 գյուղական ուսուցիչ։ Նրանք հավաքվել էին լեռնային հեռավոր գյուղերից, որպեսզի այդտեղից Լուսժողկոմատի կոլեգիայի անդամի գլխավորությամբ մեկնեն վերապատրաստման դասընթացները։

Նրանք 12 խորհրդային ուսուցիչ էին, տաջիկներ, գյուղական ակտիվի ծաղիկը, ավտոնոմ Տաջիկստանի ղշլաղների պատանեկությունը։

Նրանցից շատերն առաջին անգամն էին իրենց ձեռքը վերցնում հրացանը։ Յեվ չկարողանալով, ինչպես հարկն է, բանեցնել այդ մահաբեր գործիքը, նրանք, հողագործների զավակները, տասներկու տաջիկ ուսուցիչներ, միացան մի մարդու պես ինքնապաշտպանության ջոկատին։

Ֆուզայլիի հարյուրավոր ձիավորներից բաղկացած բանդայի դեմ դուրս յեկավ Գարմից ինքնապաշտպանության առաջին ջոկատը, Պետբանկի գործակալության վարիչ Գուտովսկու հրամանատարությամբ։ Դեռ յերեկ Գուտովսկին զբաղված էր ֆինանսական հարցերով, իսկ այսօր նա մի բուռ հերոսներին առաջնորդում և մեռնելու Խորհրդային Իշխանության համար։

Կիմչակ գյուղում, Գարմից 35 կիլոմետր հյուսիս-արևելք, տասներկու ուսուցիչ, յերեք չեկիստ, Պետբանկի մի ծառայող և յերկու խորհրդային աշխատող ընդհարվեցին Ֆուզայլիի բանդայի հետ, մի քանի հարյուր հոգու դեմ։

Փամփուշտները չափազանց քիչ էին։ Հանդիպումն անակնկալ էր։ Բասմաչներն ողակել էին մի բուռ հերոսներին, մահաբեր կրակով կյանք կյանքի յետևից դուրս կորզելով նրանց շարքերից։

Յեվ յերբ տասնութ հոգուց տասնըյոթն արդեն սպանված էր, Խորհրդային Իշխանության համար, Գարմի համար, Ֆուզայլիի դեմ կռվելու մնաց միայն մեկ ուսուցիչ։

Մեկ ուսուցիչ մի անհայտ գյուղից, վերջին հրացանից կրակելով վերջին փամփուշտները, գյուղացու ձեռքով մի յերկտող ուղարկեց Գարմ։

— Մնացել եմ մենակ։ Կմեռնեմ, բայց անձնատուր չեմ լինի...

Սոված գայլերի վոհմակի նման վոռնում էր բանդան ուսուցչի մարմնի վրա:



Սոված գայլերի վոհմակի նման վոռնում էր բանդան ուսուցչի մարմնի վրա:

Այդ մարմինը ձիու վրա գցած քարշ էյին տալիս վայրագ արշավով:

Տասներկու խորհրդային ուսուցիչ, յերեք չեկիստ, յերկու խորհրդային աշխատող և Պետրանկի մի ծառայող 132 րոպե կռվեցին 350 հակահեղափոխականների բանդայի դեմ և ընկան այն մահով, ինչպիսի մահով մեռնել գիտեն միայն հերոսները:

Մի քանի որ անց Պետրանկի վարիչ Գուստովսկու բնակարանում գտան մի նամակ:

Նամակը հասցեյագրված էր Սվերդլովսկ, իր կնոջը: Ահա թե ինչ է գրում Գուստովսկին.

— «Իմ սիրելի Պոլյա. մեկնում եմ Գարմից: Ուր, և վորքան ժամանակով, ճիշտ



հայտնի չէ: Այդպես է պետք: Յեթե չվերադարձա—դիմիր—քեզ կենսաթոշակ կըտան: Պահպանիր քեզ»:

Այդպես են մեռել այն մարդիկ, վորոնք պաշտպանել են Գարմը:

## 3. ԳԱՐՄՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ ՅԵՂԱՎ

Բասմաչների հորձանքի դեմ Գարմը նետեց յերկրորդ ջոկատը: Շատ մեծ է անունը—ջոկատ... ինն հոգի՝ ընկ. Մոկրեցկու հրամանատարությամբ: Բայց դա ջոկատ էր: Ամենաիսկական մարտական միավոր, վորն ընդհարվելով Ֆուզայլիի բանդայի հետ, քայլ առ քայլ նահանջում էր դեպի Գարմ, կարողանալով կասեցնել բանդիտական ավազակախմբի ճնշումը:



Բուժարանի ավագ բժիշկը, ուսը նետելով հրացանը վազեց գիծը գրավելու

Մոկրիցկու ջոկատը կռվելով, նահանջեց դեպի քաղաքը։ Վերջին պաշտպանները, մի բուռ մարդիկ, տենդորեն պատրաստվում էյին պաշտպանել խորհրդային Գարմը մինչև իրենց վերջին կաթիլ արյունը։ Բուժարանի ավագ բժիշկը, ուսը նետելով հրացանը, վազեց դիրք գրավելու, թողնելով բժշկուհուն բուժարանում, վորտեղ բժշկուհին կազմակերպում էր յերթական հիվանդանոց։

Ապրիլի 22-ի ժամի 5-ն էր, յերբ Ֆուզայլին, հարձակվելով արևելքից, յերեք կողմից պաշարեց խորհրդային Գարմը։

Քաղաքին մնացել էր միայն մի ճանապարհ. անդունդների ու ձորերի միջով, հեռագրական գծի յերկայնքով, դեպի Դյուշամբե։

Ժամի 5-ին սկսեց կտկտալ Մորզեյի ապարատը։

— Դյուշամբե... Դյուշամբե... խոսում է Գարմը. մենք շրջապատված ենք .. հեծելազոր... Ճիշտ հայտնի չէ, թե վորքան, մի քանի հարյուր... Քաղաքում չկան հրացաններ, փամփուշտներ ու մարդիկ... Ի՞նչ անել կանանց, յերեխաներին։ Կարելի՞ յե արդյոք բացահանվել։

Դյուշամբեյի (Տաջիկստանի մայրաքաղաքը) հեռագրատան փոքրիկ սենյակում



33830

հուզմունքով բացում էյին այդ տողերի ծածկագրերը։ Այդ միջոցին Դյուշամբեյում տեղի յեր ունենում խորհուրդների համագումարը։

Շրջանի զորքերի հրամատար ընկ. Դիբենկոն, վոր համագումար եր յեկել վորպես պատգամավոր, ստիպված եր դիմելու մարտական օպերացիաների։

Դյուշամբեյից ապարատը պատասխանում է.

— Վոչ մի բացահանում (էվակուացիա)։ Մի գիջեք քաղաքը։ Ներս մի թողեք Ֆուզայլիին։ Սավառնակով կուղարկենք հրացաններ, օգնություն կհասցնենք, մի քանի մարդով...

Ծեր հեռագրիչը Գարմից ցավեցնելու չափ սեղմել է ձեռքում հաղորդիչի կոթունը, թըխկթըխկացնում է.

— Փամփուշտ չկա, կրակում ենք վերջին փամփուշտները... Քաշ կտանք մինչև մութն ընկնելը... Աերոպլա՛ն, աերոպլա՛ն, շուտով աերոպլան...

Զորքերի հրամատար ընկ. Դիբենկոն կցկտուր նետում է.

— Ոդաչու Կվաչենկո։

Ոդաչուն նայեց լուսամուտին. յերեկոյան մութն արդեն փռվում է գետնին, անիծված խավարը խլում է Գարմից վերջին հույսը։

Սոված գայլերի վոհմակի նման վոռնում էր բանդան ուսուցչի մարմնի վրա։



Սոված գայլերի վոհմակի նման վոռնում եր բանդան ուսուցչի մարմնի վրա։

Այդ մարմինը ձիու վրա կցած քարշ եյին տալիս վայրագ արշավով։

Տասներկու խորհրդային ուսուցիչ, յերեք չեկիստ, յերկու խորհրդային աշխատող և Պետբանկի մի ծառայող 132 րոպե կռվեցին 350 հակահեղափոխականների բանդայի դեմ և ընկան այն մահով, ինչպիսի մահով մեռնել գիտեն միայն հերոսները։

Մի քանի որ անց Պետբանկի վարիչ Գուստովսկու բնակարանում գտան մի նամակ։

Նամակը հասցեյագրված եր Սվերդլովսկ իր կնոջը։ Ահա թե ինչ է գրում Գուստովսկին.

— «Իմ սիրելի Պոլյա. մեկնում եմ Գարմից։ Ուր, և վորքան ժամանակով, ճիշտ



հայտնի չե։ Այդպես ե պետք։ Յեթե չվերադարձա—դիմիր—քեզ կենսաթոշակ կըտան։ Պահպանիր քեզ»։

Այդպես են մեռել այն մարդիկ, վորոնք պաշտպանել են Գարմը։

## 3. ԳԱՐՄՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ ՅԵՂԱՎ

Բասմաչների հորձանքի դեմ Գարմը նետեց յերկրորդ ջոկատը։ Շատ մեծ ե անունը—ջոկատ... ինն հոգի՝ ընկ. Մոկրեցկու հրամանատարությամբ։ Բայց դա ջոկատ եր։ Ամենախիզախ մարտական միավոր, վորն ընդհարվելով Ֆուզայլիի բանդայի հետ, քայլ առ քայլ նահանջում եր դեպի Գարմ, կարողանալով կասեցնել բանդիտական ավազակախմբի ճնշումը։



Բուժարանի ավագ բժիշկը, ուսը նետելով հրացա
վազեց դիրք գրավելու

— Թռչել չի կարելի։

— Պետք է թռչել...

— Լսում եմ։ Երեք րոպեից սավառնակը պատրաստ կլինի։

Ոդաչուն սկսեց պատրաստել մեքենան յերեկոյան թռիչքի. Թռիչք դեպի Գարմ, ուր մինչ այդ դեռ վոչ վոք չէր թռել, ուր չկա վոչ այերոդրոմ, վոչ իջնելու հրապարակ. բայց դրա փոխարեն կան մարդիկ, վորոնք ոգնություն են աղերսում, կա մի փոքրիկ անպաշտպան քաղաք, ողակված բասմաչների բանդայով, վոր ոգնության է սպասում։

Մութն է... Հրաձգությունը դադարում է։ Պատրաստվում են, ըստ յերևույթին, ներխուժել քաղաքը։ Ինչպե՞ս կիջնի սավառնակը, վորը պատրաստվում ենք հիմա ուղարկել։ Այն հրապարակը, վորն ընտրել ենք իջնելու համար, 15 վերստ հեռու յե քաղաքից։ Խավար է, իսկ շուրջն անդունդներ են։ Հաջող կիջնի՞ արդյոք սավառնակը։

Ամբողջ գիշեր մինչև լույս կտկտում է ապարատը Դյուշանբեյում։ Ամբողջ գիշեր մինչև լույս կտկտացնում էր Գարմի ծեր հեռագրիչն էլ գծիկներն ու կետերը։ Հերոս քաղաքը, հերոս մարդիկ, դիմանում



եյին ամբողջ գիշերը։ Գարմը դեռ խորհրդային էր։

Բայց ...ավոտից բանդան հարձակվել սկսեց։

Լարվածությունից քարացած ձեռքով կտկտացնում է ծեր հեռագրիչը.

— Վոչ վոք չկա։ Բոլորը գնացել են պոստերը։ Ո՞ւր է աերոպլանը։ Ինչու՞ չկա աերոպլանը։



Լարվածությունից քարացած ձեռքով կտկտացնում էր ծեր հեռագրիչը...

Անցնում եյին յերկար ու ձիգ վայրկյաններ, ինչպես րոպեներ։ Րոպեներն անցնում եյին ծուլորեն, ինչպես ժամեր։

Բժշկուհին շտապ փակցրեց բուժարանի դռանը կարմիր խաչով դրոշակ։ Նա հույս ուներ փրկելու վիրավորների կյանքը։

Բանդան խուժեց արվարձանը։

— Ո՞ւր է աերոպլանը։ Մերոնք նահանջում են, յետ են գնում։ Բասմաչները մտել են քաղաքը։ Դիմացս, փողոցում մեկին կտրատում են, գոռում ու գոչում։ Մերոնք չեն կրակում, փամփուշտ չկա։ Փախչում են, փախչում եմ և յես, լսո՞ւմ եք։ Յես, հեռագրիչս, փախչում եմ. վերցնում եմ ինձ հետ Մորզեյի ապարատը, փախչում եմ։ Հետո վերցնում եմ ապարատը։ Կաշխատեմ գծի վրա միանալ, ընդունեցեք իմ ազդանշանները։ Մնաք բարև, մնաք...

Ժապավենը կտրվեց, ապարատը լռեց։ Գարմն անձնատուր յեղավ։

## 4. ԳՎԱՐԴԻԱՅԻ ԿԱՊԻՏԱՆ ԲԵՍՏԱՇՎԻԼՈՒ ՄԱՀԸ

Զուր էր թըխթըխկացնում ապարատը Դյուշամբեյի հեռագրատանը, ջղաձգորեն կանչում՝ «Գարմ... Գարմ...»։

Գարմը լուռ էր։ Սպիտակ ժապավենը խշխշալով ու գալարվելով տափակ օձի պես դանդաղ իջնում էր հատակի վրա, չծածկվելով վոչ գծիկներով և վոչ կետերով։

Մարդիկ, վոր 24 ժամվա ընթացքում վոչ մի րոպե չէյին հեռացել նեղ, ծխախոտի ծխով լի սենյակից, չէյին հավատում, վոր ապարատը լռեց ընդմիշտ, վոր նա այլևս վոչինչ չի պատմի այն մասին, թե



ինչպես է ընթանում՝ վարձու մարդասպանների բանդայի դեմ մղած կռիվը։

Դյուշամբեյի հեռագրատան լուսամուտից գալիս էյին կենսուրախ նվագի հընչյուններ։ Խորհուրդների հենց նոր բացված համագումարում փողավոր նվագախումբն էր նվագում այդ։ Խորհուրդների համագումարը, զբաղվելով յերիտասարդ ավտոնոմ հանրապետության հերթական գործերով, սրտատրոփ սպասում էր լուրերի հեռագրատան նեղլիկ, ծխախոտի ծխով լի սենյակից։

Բայց ծեր հեռագրիչը, վորը հերոսաբար դիմացել էր իր պոստում մինչև առավոտ, մինչև բասմաչների վերջին գրոհը, գնացել էր, կարծես ցնդվել էր ոդի մեջ։ Պատասխան չկար։

Ժապավենը կտրվեց։

*
* *

Դեռ ապրիլի 24-ի յերեկոյան Բեստաշվիլին վազեց ինքնապաշտպանության շտաբը։ Նա գվարդիայի նախկին կապիտան էր, մի քաղաքացի, վորը մինչև իսկ քաղաքացու կոչում չուներ, դիմեց գործկոմի նախագահի տեղակալ ընկ. Կրավչուկին, խնդրելով, վոր իրեն էլ ընդունեն ինքնապաշտպանության ջոկատը և հրացան տան։

Գործկոմի նախագահի տեղակալը կտրուկ մերժեց նրա խնդիրը։ Նա առաջին անգամ չէ, որ տեսնում էր Բեստաշվիլուն, դեմքից շատ լավ ճանաչում էր նրան, որովհետև չի կարելի չճանաչել միակին մի քաղաքում, որտեղ ընդամենը 20—25 յեվրոպացի կար։

Այն ժամանակ, յերբ բասմաչների ջոկատը յերեք կողմից շրջապատել էր Գարմը և կատաղի կրակով հարձակվում էր քաղաքի վրա, յերբ յուրաքանչյուր հրացան, յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր փամփուշտ և յուրաքանչյուր զենք հաշված էր, ինչպես կարելի յեր զենք վստահել նախկին գվարդիայի կապիտանին։ Իսկ յեթե հանկարծ նա մեր դեմ դարձնի զենքը…

Բեստաշվիլին համառորեն պնդում էր, որ իրեն հրացան տան։ Հուզվում էր, համոզում։ Նա բացատրում էր, որ չի կարելի անզեն մնալ այն րոպեյին, «յերբ զենքին վարժ մարդը հավասար է մի ամբողջ դասակի՝ յերկու գնդացրով»։

Ապրիլի 23-ի վաղ առավոտյան, ինչպես մենք արդեն ասացինք, կտրվեց Դյուշամբեյի հեռագրատան փոխանցումը Գարմից։

Յեթե ապարատը չլռեր, յեթե չհեռանար ծեր հեռագրիչը, նա նեղ ժապավենի



վրա կթրխթրխկացներ նախկին սպայի պանծալի մահվան վեպը։ Նա կպատմեր, թե ինչպես նախկին գվարդիայի կապիտանն իր արյան գնով ձեռք բերեց իրեն համար Աշխատավորների հանրապետության մեջ հավասարի իրավունք։

Բեստաշվիլին ընդունեց կենդանի մնացած մի քանի հերոսների հրամատարությունը կյանքի համար ամենավտանգավոր կետերից մեկում, Գարմի մատույցներում։

Բասմաչներին լավ յերևում էր ամբողջ հասակով ցցված Բեստաշվիլու կեր-



Բասմաչներին լավ յերևում էր ամբողջ հասակով ցցված Բեստաշվիլու կերպարանքը

պարանքը։ Բասմաչների ականջին պարզ հասնում էր փոքրիկ կարմիր ջոկատի հրամատարի հնչեղ ձայնը։—

**—Հեղափոխության թշնամիների դեմ, հակահեղափոխականների դեմ, կրա՛կ...**

Փորից ծանր վիրավորված Բեստաշվիլուն անգլիական վարձկանների ավազակախումբը թրերով կտոր-կտոր էր արել։

Յերկու որ անց, յերբ Գարմն արդեն փրկված էր, յերբ գլխովին ջախջախված բանդան լեղապատառ փախչում էր քաղաքից, փրկություն գտնելով ժայռերի ճեղքերում,—Գարմում թաղեցին նախկին ըսպային։

Մեկը նրա գերեզմանի վրա ասաց.

— Նախկին գվարդիայի կապիտան Բեստաշվիլին մեռավ փառահեղ մահով, փառահեղ գործի համար։

* * *

Ոդաչուն ու մեխանիկը յերգում եյին։ Արշալույսից առաջ խավարը դեռ գրկած ուներ յերկիրը, յերբ նրանք դեպի վեր սլացան Դյուշամբեյի աերոդրոմից, և մթության մեջ բռնեցին բասմաչների բանդայով պաշարված քաղաքի ճանապարհը։

Հզոր մեքենան իր դռռոցով խլացնում



էր ոդաչուի ու բորտ-մեխանիկի յերգի հնչյունները, տարերքը հաղթած մարդու հաղթական յերգի ձայնը։

Ոդաչու Կվաչենկոն և մեխանիկ Պավլովը սովորություն ունեյին յերգելու սավառնակի վրա, յերբ մի ժամում 100 կիլոմետր արագություն եյին զարգացնում։

Սավառնակի կաբինեյում, սեղմված լուսամուտի քառակուսուն, նստել եյին յերկու զինվորական, «Մաքսիմ» գնդացիրը գրկներն առած։ Զինվորականներին թվում էր, վոր պողպատե թռչունը չափազանց դանդաղ է շարժվում, ներքևում փռված հողերը, լեռները, անդունդներն ու խոր-խոր ձորերը սողում են կրիայի նման սավառնակի փորի տակից։

Բոլորովին լույս էր, յերբ ոդաչուն ու մեխանիկը ուրախ իրար յերեսի նայեցին և ընդհատեցին յերգը։

Հեռվից արծաթի պես փայլում էր մի ոձ։ Վախշ գետն էր, իսկ նրա յետևում Գարմը, մի քաղաք, վորն ոգնություն էր սպասում միայն յերկնքից։

Յերկու մարդ ու յերկու գնդացիր Գարմը փրկելու ընթացող «բանակի» առաջապահն էր։ «Բանակը» թռչում էր յերկրորդ սավառնակով։

«Բանակում» բրիգադի հրամատար

Շապկինն էր առանց բրիգադի, կոմիսար Ֆեդինն էր և մի դասակի հրամատար նույնպես առանց դասակի։

Սավառնակները, ճախրելով օդում, ձգված գալարագծերով շրջաններ կազմելով, պտտվում էին իջնելու համար միակ հարմար հրապարակի գլխին, որն անչափ փոքր էր և հատվում էր անդունդով։

Սավառնակները, տեսնելով վերից հրապարակը, զգուշությամբ իջնում էին, իսկ 15 վերստի վրա ցածրում, հաղթահարելով վերջին դիմադրությունը, վայրենի ճիչերով բասմաչների հորձանքը ներս էր խուժում Գարմը։

## 5. ՖՈՒԶԱՅԼԻԻ ՎԵՐՋԸ

Գարմի ինքնապաշտպանության ջոկատը բռնամարտով ընդունեց բասմաչների գրոհը։ Փամփուշտները բոլորը կրակել էին, ստիպված էին տալ քաղաքը, գիջել, թշնամուն հանձնել ընկերների արյունով ներկած հողը։

Ինքնապաշտպանության ջոկատը նահանջում էր Սուրխ-Օբա գետի ափով։ Իսկ 15 վերստի վրա հապճեպ ընտրած հրապարակի վրա տենդորեն իջնում էր 6 հոգուց բաղկացած «բանակի» դեսանտը։



«Բանակն» առանց մի րոպե կորցնելու թռավ ձիերի վրա, որ առաջին իսկ պահանջով հոժարությամբ նրանց տվել էր հարևան գյուղը։

Բրիգադի ռազմկոմ Անդրեյ Ֆեդինը, Դոնեցի շիկահեր պրոլետարը, համեստ ու սուսիկ բանվոր՝ բաց ու բարեսիրտ դեմքով, մտրակում էր ձին, շտապեցնում էր գնդացրորդներին, որոնք գնդացրերը բարձել էին ռազմական այդպիսի բեռան անսովոր ձիերի վրա։

Դեխկանների (չքավոր գյուղացիության) մեջ մեծ ժողովրդականություն վայելող այդ հանքափորը, որը կռվել էր և Դենիկինի դեմ և Վրանգելի դեմ, որն իր կաշվի վրա զգացել էր լեհական ճակատի զրկանքները, գիտեր, թե ... որքան թանգ են վայրկյաններն այդպիսի մոմենտներում։

6 հոգուց բաղկացած դեսանտը քաղաքի նահանջող պաշտպաններին հանդիպեց համարյա արվարձանում։

15 րոպե չէր, ինչ բասմաչները գրավել էին քաղաքը, ինչ Ֆուզայլի բանդան տեր ու տնօրեն էր Գարմում, Տաջիկստանի Սոցիալիստական Ավտոնոմ Հանրապետության կարմրադրոշ շրջանի մայրաքաղաքում։

Բրիգադի հրամատարը, կարգապահ ինքը խստապահանջ դեպի կարգապահությունը, այս անգամ խախտեց կանոնը։

Զորքերի հրամատարը Դյուշամբեյից ուղարկելով արշավախումբը, հրամայել էր ռազմկոմ Ֆեդինին, որպեսզի նա անցնի պաշտպանների գլուխը և կռվի։ Իսկ բրիգադի հրամատար Շապկինը պետք է իմանար, թե ինչ է կատարվում Գարմում և անմիջապես յետ դառնար սավառնակով։ Բայց օդաչուն յետ թռավ միայնակ. Նա զեկուցեց, որ բրիգադի հրամատարը չկա, որ բրիգադի հրամատարը ռազմկոմի հետ միասին՝ 2 կարմիր բանակային - գնդացըրորդից, մեկ Լուսժողկոմի կոլլեգիայի անդամից ու տաջիկ միլիցիոներից բաղկացած «բանակի» կազմով, բաժանվելով յերկու ջոկատի, գնաց դուրս քշելու հակահեղափոխական հեծելազորին կարմրադրոշ Գարմից։

* * *

Յափուջի ձյունածածկ լեռնանցքում, ուր ընկավ Գարմի հերոսներից մեկը, դեխկանները հուշարձան են կանգնեցրել։ Նըրանք բերել-հավաքել են այստեղ քարեր, և քառսայինմի քարակույտ կազմելով, հավերժացրել են մի մարդու հիշատակ, որն



իր կյանքը նվիրաբերեց նրանց հանգստի ու խաղաղ կյանքի համար։

Կանցնի փոքր ինչ ժամանակ և ձյունածածկ լեռնացքի քարակույտի շուրջը կըհորինվեն յերգեր և առասպելներ։

Այդ յերգերը կերգեն լեռնցի տաջիկները, քայլելով բեռնած ձիերի առջևից, զգուշությամբ անցնելով անդունդների վրայի կածաններով։ Այդ առասպելները Գարմի հերոսների մասին կպատմեն անցորդին հանգրվաններում, լեռներում ու ձորերում և մեղմ կը ճնգճնգա դուտարը (յերաժշտական գործիք), յերգելով հուզող, մելամաղձոտ յերգը չայխանում, Տաջիկստանի անհայտ ու հեռավոր գյուղերում։



«Այդ թռչունների մեջքից ցած թռան հինգ հոգի...»

Առասպելը կպատմի, վոր յերբ Ավղանստանի յերկրից խոլամանկ ու չարանենգ Ինգլիզի ուղարկած ձիավորները սև ճանճերի պես պատեցին արյունաշաղախ Գարմի փողոցները, յերկնքից թռան յերկու թռչուն:

Այդ թռչունների մեջքից ցած թռան հինգ հոգի, վոր թռել, յեկել եյին կախաղանից փրկելու չքավորներին:

Այդ հինգ հոգին հասարակ [illegible]արդիկ չեյին: Նրանք յեղբայրն[illegible]րն եյին յոթ գյուղացիների ըն[illegible]անիքի, վոր կոչվում է «Կոմուն» [illegible]: Նրանք յերկու կողմից վրա սըվե[illegible]րն Ինգլիզի վարձկանների դեմ:

Նրանցից Ֆեդինն, իր կըրտսեր յեղբոր հետ միասին, նստած ձիերի վրա,—վորոնց ռնգներից կրակ ու ծուխ եր յելնում,—պարզ յերկնքից յեկող շանթի նման, մարգարեյի թրի նման, վրա տըրվեց 100 ձիավորից կազմված հեծելազորի վրա, ջարդեցին, կոտորեցին անհաշիվ թշնամի, 15 անգամ 15 վերստ քշեցին նրանց իրենց առջևից, ինչպես հովիվը քըշում է իր վոչխարներին:

*
* *

Առասպելը, ինչպես յուրաքանչյուր առասպել, սահման չունի: Այո, մեզ բոլո-



րիս առասպելական է թվում ընկեր Ֆեդինի ու Շապկինի, գնդացրորդներ Տիմոշենկոյի ու Սերգեյևի արարքը, վորոնք Գարմից փախցրին Ֆուզայլիի ավազակախըմբին, վոչնչացնելով 80 հոգի:

Այո, մեզ առասպելական է թվում, յերբ Ֆեդինը մի գնդացրորդի հետ, մոռանալով լցնել իր հրացանը, ներխուժեց քաղաքը և դեմ առավ բասմաչների առաջակալին՝ զինված փամփուշտներով ու գոտեպնդված փամփշտակալներով: Վախկոտ բասմաչները, վորոնք սովոր եյին գործ ունենալ անզեն գյուղացիների հետ, անձնատուր յեղան՝ անփամփուշտ հրացանով զինված ռազմիկին:

Մի բուռն անձնուրաց հերոսներին ոգնեց անգլիական լրտեսը: Լըրտես ու հակահեղափոխույդ, բրիտանական հետախուզության գործակալ կազակ-սպա Պիմենեը Ֆուզայլիի ոգնականն եր, մուսուլմանություն եր ընդունել Ուստա—Աբդուլ-Կադիր անունով:

Նա, տեսնելով Ֆեդինի վզին կարմըրին տվող յերկու ռոմբը, կարծեց, վոր Գարմ է ներխուժել մի ամբողջ դիվիզիա և այդ մասին հաղորդեց բանդիտական շտաբին, խուճապ առաջացնելով այնտեղ:

Ֆուզայլին, սոսկալի կորուստներ կը-

րելով, փախավ։ 12 հոգի միայն գլուխները պրծացրին Տաջիկստանից։

Անգլիական գործակալը, բասմաչների առաջնորդը, անախորժ և արտասովոր նորություններ բերեց Բուխարա այն յերկրից, ուր առաջ բեգերը ձիերի փոխարեն մարդկանց եյին լծում գութաններին։

Նա պատմեց, ի միջի այլոց, և Գարմի մանկատան մասին։ 40 մանուկների, բայլշևիկական կորյունների մասին։

Նրա մոտենալուն պես, յերեխաները կաքավների ճտերի պես փախան, ցրվեցին հեռու ղշլաղները։ Իսկ յերբ գյուղերի վրա սկսեց ճախրել սավառնակը, ցրելով թռուցիկներ այն մասին, թե Ֆուզայլին արդեն դուրս է շպրտված, բայլշևիկների մանկատան այդ յերեխաները կարդում եյին անգրագետ ու խավար գյուղացիներին այդ թռուցիկները, բացատրելով, վոր այդ մասին գրված է յերկնից ցած իջած թղթերում։

Նրանք, Գարմի մանկատան այդ յերեխաները, կմեծանան ու կդառնան Խորհուրդների պաշտպաններն այդ լեռներում, դեպի Հնդկաստան տանող Տաջիկստանի մատույցներում։

---



ՀՀ Ազգային գրադարան
NL0312994

13.233

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. «ԿԱՐՄԻՐ ՁԻՆՎՈՐ»-Ի

891.71
12-26